ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 14

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով .

Համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է .

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ 5 արտահերթ նիստի ***օրակարգը.***

1. Հաղորդում 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին .

2.Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին .

3.Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին .

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՌՈՄԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՂԱՍԻ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 15

ՀԱՂՈՐԴՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառվարման մասին >> Հայաստանի հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի , 1-ին կետի պահանջներով .

Համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումը ընդունել ի գիտություն, համաձայն հավելվածի :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՌՈՄԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՂԱՍԻ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Կոտայք համայնքի ավագանու
2017թ. ապրիլի 12-ի N 15
որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2017թ. - 31/03/2017թ. ժամանակահատվածի համար)

| | |
|---|---|
| 1. Համայնքի անվանումը | ԿՈՏԱՅՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ |
| 2. Փոստային հասցե | 2223 |
| 3. Համայնքային տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման՝ | ԿՈՏԱՅՔ, 207038 |
| 4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը | |
| 5. Համայնքի՝ Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը | |
| 6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ | (համայնքի բյուջե՝ 2) |
| 7. Չափի միավորը՝ *հազար դրամ* | |

«__06__»_____04___2017 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՀԱԿ ՊԱՐՍԱՄԻ

(Ա.Հ.Հ.)

Կ.Տ.

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2017թ. - 31/03/2017թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Տարեկան հաստատված պլան: Ընդամենը (ս.5+ս.6) | Տարեկան հաստատված պլան: այդ թվում վարչական մաս | Տարեկան հաստատված պլան: այդ թվում ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան: Ընդամենը (ս.8+ս.9) | Տարեկան ճշտված պլան: այդ թվում վարչական մաս | Տարեկան ճշտված պլան: այդ թվում ֆոնդային մաս | Փաստացի: Ընդամենը (ս.11+ս.12) | Փաստացի: այդ թվում վարչական մաս | Փաստացի: այդ թվում ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | 44339.9 | 44339.9 | 0.0 | 44339.9 | 44339.9 | 0.0 | 11334.8 | 11334.8 | 0.0 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող | 7100 | 11928.5 | 11928.5 | x | 11928.5 | 11928.5 | x | 3299.0 | 3299.0 | x |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112), այդ թվում՝ | 7131 | 8206.1 | 8206.1 | x | 8206.1 | 8206.1 | x | 704.0 | 704.0 | x |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և | | 747.8 | 747.8 | x | 747.8 | 747.8 | x | 106.8 | 106.8 | x |
| 1111Ա | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և | | 504.7 | 504.7 | x | 504.7 | 504.7 | x | 95.1 | 95.1 | x |
| 1111Բ | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և | | 243.1 | 243.1 | x | 243.1 | 243.1 | x | 11.7 | 11.7 | x |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 7458.3 | 7458.3 | x | 7458.3 | 7458.3 | x | 597.2 | 597.2 | x |
| 1112Ա | - Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող ոչ գյուղ | | 700.0 | 700.0 | x | 700.0 | 700.0 | x | 54.8 | 54.8 | x |
| 1112Բ | - Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող գյուղ | | 6758.3 | 6758.3 | x | 6758.3 | 6758.3 | x | 542.4 | 542.4 | x |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝ | 7136 | 3607.4 | 3607.4 | x | 3607.4 | 3607.4 | x | 2565.1 | 2565.1 | x |
| 1121Ա | Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից) | | 42.8 | 42.8 | x | 42.8 | 42.8 | x | 0.0 | 0.0 | x |
| 1121Բ | Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից) | | 3564.6 | 3564.6 | x | 3564.6 | 3564.6 | x | 2565.1 | 2565.1 | x |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման | 7145 | 115.0 | 115.0 | x | 115.0 | 115.0 | x | 30.0 | 30.0 | x |
| 1131 | Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 | 71452 | 115.0 | 115.0 | x | 115.0 | 115.0 | x | 30.0 | 30.0 | x |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ | | 15.0 | 15.0 | x | 15.0 | 15.0 | x | 12.5 | 12.5 | x |
| 1133 | աա) Հիմնական շինությունների համար | | 15.0 | 15.0 | x | 15.0 | 15.0 | x | 12.5 | 12.5 | x |
| 1133Ա | -մինչև 300 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ | | 15.0 | 15.0 | x | 15.0 | 15.0 | x | 12.5 | 12.5 | x |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի | | 100.0 | 100.0 | x | 100.0 | 100.0 | x | 17.5 | 17.5 | x |
| 1137Ա | - ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ | | 50.0 | 50.0 | x | 50.0 | 50.0 | x | 2.5 | 2.5 | x |
| 1137Բ | - ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ | | 50.0 | 50.0 | x | 50.0 | 50.0 | x | 15.0 | 15.0 | x |
| 1150 | 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ * | 7146 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1160 | 1.5 Այլ հարկային եկամուտներ, (տող 1161 + տող 1165 ), այդ թվում՝ | 7161 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող | 7300 | 30761.4 | 30761.4 | 0.0 | 30761.4 | 30761.4 | 0.0 | 7690.4 | 7690.4 | 0.0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված | 7331 | 30761.4 | 30761.4 | x | 30761.4 | 30761.4 | x | 7690.4 | 7690.4 | x |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով | | 30761.4 | 30761.4 | x | 30761.4 | 30761.4 | x | 7690.4 | 7690.4 | x |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 | 7400 | 1650.0 | 1650.0 | 0.0 | 1650.0 | 1650.0 | 0.0 | 345.3 | 345.3 | 0.0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + | 7415 | 1050.0 | 1050.0 | x | 1050.0 | 1050.0 | x | 189.0 | 189.0 | x |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | 425.7 | 425.7 | x | 425.7 | 425.7 | x | 0.0 | 0.0 | x |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1331Ա | Համայնքի սեփականություն համարվող ոչ գյուղ. նշ. հողերի վարձավճար | | 24.3 | 24.3 | x | 24.3 | 24.3 | x | 19.0 | 19.0 | x |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 600.0 | 600.0 | x | 600.0 | 600.0 | x | 170.0 | 170.0 | x |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և | 7421 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + տող 1352), այդ թվում՝ | 7422 | 600.0 | 600.0 | x | 600.0 | 600.0 | x | 156.3 | 156.3 | x |
| 1351 | Տեղական վճարներ | | 600.0 | 600.0 | x | 600.0 | 600.0 | x | 156.3 | 156.3 | x |
| 1351Դ | Տեղական վճար աղբահանության համար | | 600.0 | 600.0 | x | 600.0 | 600.0 | x | 156.3 | 156.3 | x |
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից(տող 1361 + տող 1362), | 7431 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1370 | 3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ, (տող 1371 + տող | 7441 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 1380 | 3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ, (տող 1381 + տող | 7442 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ, (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝ | 7451 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

(հազար դրամով)

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2017թ. - 31/03/2017թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե | Ընդամենը (ս.10+ս.11) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե | Ընդամենը (ս.13+ս.14) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | 56157.7 | 44339.9 | 11817.8 | 56157.7 | 44339.9 | 11817.8 | 7526.6 | 7526.6 | 0.0 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում` | 30571.9 | 30571.9 | 0.0 | 30571.9 | 30571.9 | 0.0 | 5864.6 | 5864.6 | 0.0 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից` | 30056.7 | 30056.7 | 0.0 | 30056.7 | 30056.7 | 0.0 | 5821.4 | 5821.4 | 0.0 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 30056.7 | 30056.7 | 0.0 | 30056.7 | 30056.7 | 0.0 | 5821.4 | 5821.4 | 0.0 |
| 2130 | 1 | 3 | 0 | Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից` | 115.2 | 115.2 | 0.0 | 115.2 | 115.2 | 0.0 | 43.2 | 43.2 | 0.0 |
| 2133 | 1 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 115.2 | 115.2 | 0.0 | 115.2 | 115.2 | 0.0 | 43.2 | 43.2 | 0.0 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից` | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին չպատկանող) (տող 2210+2220 + տող 2230 + տող 2240 + տող 2250), այդ թվում` | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2210 | 2 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն, որից` | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2211 | 2 | 1 | 1 | Ռազմական պաշտպանություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2220 | 2 | 2 | 0 | Քաղաքացիական պաշտպանություն, որից՝ | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2221 | 2 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (տող 2310 + տող 2320 + տող 2330 + տող 2340+տող 2350 + տող 2360 + տող 2370), այդ թվում՝ | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2320 | 3 | 2 | 0 | Փրկարար ծառայություն, որից՝ | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2321 | 3 | 2 | 1 | Փրկարար ծառայություն | 400.0 | 400.0 | 0.0 | 400.0 | 400.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+ տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | 11917.8 | 100.0 | 11817.8 | 11917.8 | 100.0 | 11817.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2420 | 4 | 2 | 0 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝ | 100.0 | 100.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2421 | 4 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 100.0 | 100.0 | 0.0 | 100.0 | 100.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | 11817.8 | 0.0 | 11817.8 | 11817.8 | 0.0 | 11817.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 11817.8 | 0.0 | 11817.8 | 11817.8 | 0.0 | 11817.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510 + տող 2520 + տող 2530 + տող 2540 + տող 2550 + տող 2560), այդ թվում՝ | 2848.0 | 2848.0 | 0.0 | 2848.0 | 2848.0 | 0.0 | 623.6 | 623.6 | 0.0 |
| 2510 | 5 | 1 | 0 | Աղբահանում, որից՝ | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 623.6 | 623.6 | 0.0 |
| 2511 | 5 | 1 | 1 | Աղբահանում | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 623.6 | 623.6 | 0.0 |
| 2520 | 5 | 2 | 0 | Կեղտաջրերի հեռացում, որից՝ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2521 | 5 | 2 | 1 | Կեղտաջրերի հեռացում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2530 | 5 | 3 | 0 | Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար, որից՝ | 548.0 | 548.0 | 0.0 | 548.0 | 548.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2531 | 5 | 3 | 1 | Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար | 548.0 | 548.0 | 0.0 | 548.0 | 548.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 2610 + տող 2620 + տող 2630 + տող 2640 + տող 2650 + տող 2660), այդ թվում` | 2320.0 | 2320.0 | 0.0 | 2320.0 | 2320.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 |
| 2630 | 6 | 3 | 0 | Ջրամատակարարում, որից` | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2631 | 6 | 3 | 1 | Ջրամատակարարում | 20.0 | 20.0 | 0.0 | 20.0 | 20.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից` | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 |
| 2661 | 6 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2700 | 7 | 0 | 0 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (տող 2710 + տող 2720 + տող 2730 + տող 2740 + տող 2750 + տող 2760), այդ թվում` | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում` | 3800.0 | 3800.0 | 0.0 | 3800.0 | 3800.0 | 0.0 | 588.5 | 588.5 | 0.0 |
| 2820 | 8 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ, որից` | 3400.0 | 3400.0 | 0.0 | 3400.0 | 3400.0 | 0.0 | 518.5 | 518.5 | 0.0 |
| 2823 | 8 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 2200.0 | 2200.0 | 0.0 | 2200.0 | 2200.0 | 0.0 | 501.5 | 501.5 | 0.0 |
| 2824 | 8 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 1200.0 | 1200.0 | 0.0 | 1200.0 | 1200.0 | 0.0 | 17.0 | 17.0 | 0.0 |
| 2830 | 8 | 3 | 0 | Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ, որից` | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 30.0 | 30.0 | 0.0 |
| 2833 | 8 | 3 | 3 | Տեղեկատվության ձեռքբերում | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 30.0 | 30.0 | 0.0 |
| 2840 | 8 | 4 | 0 | Կրոնական և հասարակական այլ ծառայություններ, որից` | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 40.0 | 40.0 | 0.0 |
| 2842 | 8 | 4 | 2 | Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 40.0 | 40.0 | 0.0 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում` | 300.0 | 300.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2910 | 9 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից` | 300.0 | 300.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 300.0 | 300.0 | 0.0 | 300.0 | 300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում` | 1300.0 | 1300.0 | 0.0 | 1300.0 | 1300.0 | 0.0 | 150.0 | 150.0 | 0.0 |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից` | 1300.0 | 1300.0 | 0.0 | 1300.0 | 1300.0 | 0.0 | 150.0 | 150.0 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 1300.0 | 1300.0 | 0.0 | 1300.0 | 1300.0 | 0.0 | 150.0 | 150.0 | 0.0 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում` | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից` | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

ՀԱՍՎԱԾ 3

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## (տնտեսագիտական դասակարգմամբ)

(հազար դրամով)

(01/01/2017թ. - 31/03/2017թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում | | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում | |
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝ | x | 56157.7 | 44339.9 | 11817.8 | 56157.7 | 44339.9 | 11817.8 | 7526.6 | 7526.6 | 0.0 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4300 + տող 4400 + տող 4500 + | x | 44339.9 | 44339.9 | x | 44339.9 | 44339.9 | x | 7526.6 | 7526.6 | x |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ | x | 27476.7 | 27476.7 | x | 27476.7 | 27476.7 | x | 5762.0 | 5762.0 | x |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող | x | 27476.7 | 27476.7 | x | 27476.7 | 27476.7 | x | 5762.0 | 5762.0 | x |
| 4111 | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 23180.4 | 23180.4 | x | 23180.4 | 23180.4 | x | 5762.0 | 5762.0 | x |
| 4112 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 4296.3 | 4296.3 | x | 4296.3 | 4296.3 | x | 0.0 | 0.0 | x |
| 4114 | - Այլ վարձատրություններ | 4115 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4120 | ԲՆԵՂԵՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4121) որից՝ | 4121 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4121 | - Բնեղեն աշխատավարձեր և հավելավճարներ | 4121 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4130 | ՓԱՍՏԱՑԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ (տող 4131), | 4131 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4131 | - Սոցիալական ապահովության վճարներ | 4131 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4210 | x | 12435.2 | 12435.2 | x | 12435.2 | 12435.2 | x | 1574.6 | 1574.6 | x |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4210 | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + տող 4212 + տող 4213 + տող 4214 + տող | x | 3220.0 | 3220.0 | x | 3220.0 | 3220.0 | x | 487.6 | 487.6 | x |
| 4211 | - Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 100.0 | 100.0 | x | 100.0 | 100.0 | x | 17.0 | 17.0 | x |
| 4212 | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | 2400.0 | 2400.0 | x | 2400.0 | 2400.0 | x | 400.0 | 400.0 | x |
| 4213 | - Կոմունալ ծառայություններ | 4213 | 20.0 | 20.0 | x | 20.0 | 20.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4214 | - Կապի ծառայություններ | 4214 | 700.0 | 700.0 | x | 700.0 | 700.0 | x | 70.6 | 70.6 | x |
| 4215 | - Ապահովագրական ծախսեր | 4215 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4216 | - Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4217 | - Արտագերատեսչական ծախսեր | 4217 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4220 | ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ | x | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 3.2 | 3.2 | x |
| 4221 | - Ներքին գործուղումներ | 4221 | 200.0 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 3.2 | 3.2 | x |
| 4222 | - Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4223 | - Այլ տրանսպորտային ծախսեր | 4229 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4230 | ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ | x | 3695.2 | 3695.2 | x | 3695.2 | 3695.2 | x | 90.2 | 90.2 | x |
| 4231 | - Վարչական ծառայություններ | 4231 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4232 | - Համակարգչային ծառայություններ | 4232 | 115.2 | 115.2 | x | 115.2 | 115.2 | x | 43.2 | 43.2 | x |
| 4233 | - Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | 4233 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4234 | - Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 400.0 | 400.0 | x | 400.0 | 400.0 | x | 30.0 | 30.0 | x |
| 4235 | - Կառավարչական ծառայություններ | 4235 | 580.0 | 580.0 | x | 580.0 | 580.0 | x | 0.0 | 0.0 | x |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4236 | - Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ | 4236 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4237 | - Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4238 | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 2600.0 | 2600.0 | x | 2600.0 | 2600.0 | x | 17.0 | 17.0 | x |
| 4240 | ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ | x | 170.0 | 170.0 | x | 170.0 | 170.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4241 | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | 170.0 | 170.0 | x | 170.0 | 170.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4250 | ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և | x | 1350.0 | 1350.0 | x | 1350.0 | 1350.0 | x | 50.0 | 50.0 | x |
| 4251 | - Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 500.0 | 500.0 | x | 500.0 | 500.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4252 | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 850.0 | 850.0 | x | 850.0 | 850.0 | x | 50.0 | 50.0 | x |
| 4260 | ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4262 + տող 4263 + տող 4264 + տող 4265 + տող 4266 + | x | 3800.0 | 3800.0 | x | 3800.0 | 3800.0 | x | 943.6 | 943.6 | x |
| 4261 | - Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 400.0 | 400.0 | x | 400.0 | 400.0 | x | 50.0 | 50.0 | x |
| 4262 | - Գյուղատնտեսական ապրանքներ | 4262 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4263 | - Վերապատրաստման և ուսուցման նյութեր (աշխատողների | 4263 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4264 | - Տրանսպորտային նյութեր | 4264 | 2000.0 | 2000.0 | x | 2000.0 | 2000.0 | x | 623.6 | 623.6 | x |
| 4265 | - Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր | 4265 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4266 | - Առողջապահական և լաբորատոր նյութեր | 4266 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4267 | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 600.0 | 600.0 | x | 600.0 | 600.0 | x | 120.0 | 120.0 | x |
| 4268 | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 800.0 | 800.0 | x | 800.0 | 800.0 | x | 150.0 | 150.0 | x |
| 4300 | 1.3 ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ (տող 4310 + տող 4320 + տող 4330), այդ թվում` | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4500 | 1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 4510 + տող 4520 + տող 4530 + տող 4540), այդ թվում` | x | 300.0 | 300.0 | x | 300.0 | 300.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4510 | ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4511 + | x | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4530 | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող | x | 300.0 | 300.0 | x | 300.0 | 300.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային | 4637 | 300.0 | 300.0 | x | 300.0 | 300.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4540 | ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4600 | 1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող 4610 + տող 4630 | x | 1300.0 | 1300.0 | x | 1300.0 | 1300.0 | x | 150.0 | 150.0 | x |
| 4601 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ, այդ թվում` | | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4610 | - Տնային տնտեսություններին դրամով վճարվող սոցիալական ապահովության | 4711 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4620 | - Սոցիալական ապահովության բնեղեն նպաստներ ծառայություններ | 4712 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4630 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ | x | 1300.0 | 1300.0 | x | 1300.0 | 1300.0 | x | 150.0 | 150.0 | x |
| 4631 | - Հուղարկավորության նպաստներ բյուջեից | 4726 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4632 | - Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից | 4727 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4633 | - Բնակարանային նպաստներ բյուջեից | 4728 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4634 | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 1300.0 | 1300.0 | x | 1300.0 | 1300.0 | x | 150.0 | 150.0 | x |
| 4640 | ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող 4641), որից` | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4641 | - Կենսաթոշակներ | 4741 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4730 + տող 4740 + տող 4750 + տող | x | 2828.0 | 2828.0 | x | 2828.0 | 2828.0 | x | 40.0 | 40.0 | x |
| 4710 | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) | x | 460.0 | 460.0 | 0.0 | 460.0 | 460.0 | 0.0 | 40.0 | 40.0 | 0.0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4711 | - Տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ | 4811 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4712 | - Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 460.0 | 460.0 | x | 460.0 | 460.0 | x | 40.0 | 40.0 | x |
| 4720 | ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ | x | 68.0 | 68.0 | x | 68.0 | 68.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4721 | - Աշխատավարձի ֆոնդ | 4821 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4722 | - Այլ հարկեր | 4822 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4723 | - Պարտադիր վճարներ | 4823 | 68.0 | 68.0 | x | 68.0 | 68.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4724 | - Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց | 4824 | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4770 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 4771 + տող 4771Ա), որից` | x | 2300.0 | 2300.0 | 0.0 | 2300.0 | 2300.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4771 | - Պահուստային միջոցներ (վարչական բյ.) | 4891 | 2300.0 | 2300.0 | x | 2300.0 | 2300.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 4771Ա | - Պահուստային միջոցներ (ֆոնդային բյ.) | 4891 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 4772 | այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + | x | 11817.8 | x | 11817.8 | 11817.8 | x | 11817.8 | 0.0 | x | 0.0 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝ | x | 11817.8 | x | 11817.8 | 11817.8 | x | 11817.8 | 0.0 | x | 0.0 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից` | x | 11617.8 | 0.0 | 11617.8 | 11617.8 | 0.0 | 11617.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5111 | - Շենքերի և շինությունների ձեռքբերում | 5111 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 11617.8 | x | 11617.8 | 11617.8 | x | 11617.8 | 0.0 | x | 0.0 |
| 5120 | ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող 5121 + տող 5122 + տող 5123), որից` | x | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5121 | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131 + տող 5132 + տող 5133 + տող 5134), որից՝ | x | 200.0 | 0.0 | 200.0 | 200.0 | 0.0 | 200.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 5131 | - Աճեցվող ակտիվներ | 5131 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5132 | - Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5133 | - Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր | 5133 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 200.0 | x | 200.0 | 200.0 | x | 200.0 | 0.0 | x | 0.0 |
| 5200 | 1.2 ՊԱՇԱՐՆԵՐ (տող 5211 + տող 5221 + տող 5231 + տող 5241), այդ թվում՝ | x | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող 6100 + տող | x | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 | 0.0 | x | 0.0 |

ՀԱՎԵԼՎԱԾ 4

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ)

(հազար դրամով)

| Տողի N | Եկամուտների անվանումները | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը(ս.4+ս.5) | այդ թվում | | Ընդամենը(ս.7+ս.8) | այդ թվում | | Ընդամենը(ս.10+ս.11) | այդ թվում | |
| | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ (դրական նշանով) ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ (բացասական նշանով)* | -11817.8 | 0.0 | -11817.8 | -11817.8 | 0.0 | -11817.8 | 3808.1 | 3808.1 | 0.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 16-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով .

Համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի << Կոտայքի մարզի Կոտայք համայնքի զարգացման ծրագիրը հաստատելու մասին >> թիվ 43-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) ավագանու որոշմամբ հաստատված հավելվածում " քառամյա " բառը փոխարինել " հնգամյա " բառով, համաձայն հավելվածի.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՌՈՄԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՂԱՍԻ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Կոտայք համայնքի ավագանու
2016 թ. դեկտեմբերի 21-ի N 43-Ն որոշման
փոփ. Կոտայք համայնքի ավագանու
2017 թ. ապրիլի 12-ի N 16-Ն որոշմամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Մշակվել է՝** համայնքի ղեկավարին կից գործող «Կոտայք համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի » կողմից
**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Սահակ Հարությունյանի կողմից
**Հաստատվել է՝** համայնքի ավագանու **21.12.2016թ-ի թիվ 43 -Ն** որոշմամբ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ..........................................................................
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ..........................................................................
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ..............
4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ..........................................................................
5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ..........................................................................
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ..........................................................................

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք համայնքի 2017-2021թթ. Զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Կոտայք համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Կոտայք համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 37-Ա որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «Կոտայք համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Կոտայք համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական

մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ ։ ՀԶԾ-ն ներառում է նաև Կոտայք համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները։ Այն Կոտայք համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Կոտայքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը։ ԽՄ-ն փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում։

# 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Կոտայք համայնքը գտնվում է Աբովյան քաղաքից 3 կմ արևելք՝ Նոր գյուղ և Կապուտան գյուղերի միջակայքում, Հատիս լեռան հարավ- արևմտյան ստորոտին: Գյուղը հայտնի է Բարձաքի ( նաև Բարձապի, Բարզաքի, Պարցաքի) անվամբ: Ավելի գործածական է դառնում Եղվարդ ( նաև Եղդավան, Եղդովան, Էլքովան) անունը, որն էլ շրջանառվում է մինչև 1965 թ, երբ պաշտոնապես վերանվանվում է Կոտայք;

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն , գրադարան, բուժամբուլատորիա:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1350-1450 մ բարձրության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ հեռավորության վրա;

Խմելու ջուրը ստանում է հարևան Ակունք գյուղից բխող <<Քառասուն աղբյուրներ>> սառնորակ աղբյուրներից: Գյուղի կլիման նախալեռնային է, ձմեռը խստաշունչ է, ամառը չոգ , հաճախակի են չորային և երաշտ տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին; Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ : Գյուղն ունի եկեղեցի՝ Սուրբ Հովհաննես, որը կառուցված է 19-րդ դարի առաջին կեսին, այժմ վերանորոգված է և գործում է:

Համայնքի վարչական տարածքը -1415,01հա է,
որից՝

- վարելահողեր – 634,35 հա
- արոտավայրեր – 394,74հա
- դաշտային ճանապարհներ -23,32հա
- արտադրական մաս /կովանոց/ -7,28հա
- գերեզմանատուն -6,0հա
- տնամերձ հողեր -63,8հա
- դպրոց -0.72հա
- հուշարձան -0.98հա
- գյուղամիջյան փողոցներ -12,4հա
- սեփականաշնորհված հողեր -700,73 հա
- մեկ հողաբաժնի չափը -0.91հա
- պետական պահուստային հողեր -80,96 հա
- համայնքի սեփականության հողեր -632 ,97հա

Կոտայք համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2026 մարդ (աղյուսակ1):

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.12.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Մարդ |
|---|---|---|
| 1. | Բնակչության թվաքանակը, մարդ | 2026 |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | 372 |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը | 15 |

Համայնքի բնակչության 51 % կազմում են տղամարդիկ և 49% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդ թվում | 2026 | 991 | 1035 |
| | մինչև 1 տարեկան | 19 | 10 | 9 |
| | 1-2 տարեկան | 61 | 33 | 28 |
| | 3-4 տարեկան | 44 | 21 | 23 |
| | 5-6 տարեկան | 65 | 29 | 36 |
| | 7-10 տարեկան | 122 | 49 | 73 |
| | 11-14 տարեկան | 96 | 35 | 61 |
| | 15-17 տարեկան | 50 | 26 | 24 |
| | 18 և ավելի տարեկան | 1569 | 788 | 781 |
| 2. | Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում | 214 | 118 | 96 |
| | Տարիքային և աշխատանքային | 186 | 104 | 82 |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 1 | 1 | 0 |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | 0 | 0 | 0 |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | 3 | 2 | 1 |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | 0 | 0 | 0 |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | 72 | 0 | 72 |
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 6 | 0 | 6 |
| 9. | Հաշմանդամներ | 21 | 9 | 12 |
| 10. | Զբաղվածներ | 1329 | 668 | 661 |
| 11. | Գործազուրկներ | 457 | 203 | 254 |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | 15 | 7 | 8 |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | 0 | 0 | 0 |

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

## *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

Կոտայք համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 9-ի N 37-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **45000.4** հազար դրամ, ծախսերի գծով՝ **55390.5** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **10390.1** հազար դրամ: Կոտայք համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է **45000.4** հազար դրամ, ծախսերի գծով՝ **58219.4** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **13219.0** հազար դրամ: 2016թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **31.64 %՝ 14239.0** հազար դրամ:
Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է:
Համայնքի գյուղատնտեսական տնտեսությունները հիմնականում զբաղված են հացահատիկի, կերային մշակաբույսերի և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

Համայնքում գործում են 5 առևտրի օբյեկներ, որտեղ իրականացվում են սննդի , ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառք: Գործում է՝ 1 դեղատուն:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 1926 թվականին :
1994 թվականին այն անվանակոչվել է համայնքի բնակիչ՝ վաստակաշատ մանկավարժ, երկար տարիներ նույն դպրոցի տնօրեն՝ Սերյոժա Վարդանյանի անունով: Դպրոցը վերջին տարիներին մասամբ վերանորոգվել է, ջեռուցումն իրականացվում է գազի վառարանների միջոցով : Դպրոցում սովորում են մոտ 228 աշակերտներ: Դպրոցական կրթությունը 12 ամյա է, դասավանդում են 21 ուսուցիչներ: Համայնքի Սերյոժա Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցը մշակույթի ասպարեզում ունի բարձր ցուցանիշներ: Դպրոցում կազմակերպվում են տոնական ցերեկույթներ, միջոցառումներ, մրցույթներ բարձր դասարանցիների միջև, սպորտլանդիաներ: Դպրոցը մասնակցել է օլիմպիադաների, մարզային մրցույթների, <<Կենգուրու>> Հանրապետական մրցույթի և ունի բարձր առաջադիմություն:
Համայնքում գործում է <<Բժշկական ամբուլատորիա>>, այն ապահովված է ջեռուցման համակարգով և անհրաժեշտ պարագաներով: <<Բժշկական ամբուլատորիա>> ԱԱՊԿ-ն աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, ունի 7 աշխատող՝ 2 ընտանեկան բժիշկ, 2 ընտանեկան բուժքույր, 1 հաշվապահ, 1 օպերատոր և 1 սանիտար:

Կոտայք համայնքն ունի մշակույթի տուն՝ 0,14 հա տարածք: 2013-2015 թվականներին մշակույթի տան վերանորոգումն ու կահավորումը հնարավոր է դարձել իրականացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության ֆինանսավորմամբ՝Քաունթերփարթի կողմից իրականացված Քաղաքացիական Հասարակության և ՏԻՄ աջակցության ծրագրի շրջանակներում, ինչպես նաև համայնքի բյուջեի ներդրումների միջոցով: Իսկ դահլիճի վերանորոգումը իրականացվել է <<ԳԱԶՊՐՈՄ-ԱՐՄԵՆԻԱ>> ընկերության կողմից; Կատարվել է մշակույթի տան կապիտալ վերանորոգում, դահլիճի աթոռների, շերտավարագույրների ձեռք բերում, տարածքի բարեկարգում, ցանկապատում, նստարանների պատրաստում և տեղադրում; Շենքը ապահովված չէ ջրով, ջեռուցման համակարգով: Մշակույթի տան սենյակներից անվճար հիմունքներով տրամադրվել է պարային համույթին՝ պարի դասեր անցկացնելու համար:
Խմբում ընդգրկված են 45 երեխաներ,2013 թվականից համույթը հանդիսանում է Վանուշ Խանամիրյանի անվան Հայաստանի պարարվեստի գործիչների միության անդամ;
2014 թվականից գործում է նաև << ԱՏԿԵՆ>> Կանադական բարեգործական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող երգչախումբ 12 երեխաների մասնակցությամբ:
Համայնքապետարանում առկա է Կոտայք համայնքի պաշտոնական կայքը, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը եւ բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում և գյուղի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որով ապահովվում է համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքում գործում է գրադարան, այն ունի 9994 գիրք: Ընթերցողների թիվը կազմում է մոտ 435 որոնցից մեծամասնությունը դպրոցականներ են:
Բնակչության դերը համայնքի մշակութային ոլորտում բարձր է :

Համայնքում կառուցված է Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին հավերժացնող հուշարձան կոթողը: Ամեն տարի մայիսի 9-ին համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ համայնքի

բնակիչները իրենց հարգանքի տուրքն են մատուցում զոհված նախատակների հիշատակին: Հուշարձանին դրվում են ծաղիկներ, ծաղկեպսակներ : Հուշարձան- կոթողը ունի մոտ 38 տարվա պատմություն : Համայնքում առկա են մատուռներ :
Աղյուսակ 3-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատությունում աշխատողների և սովորող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

**Աղյուսակ 3. Կոտայք համայնքի միջնակարգ դպրոցի վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1. | <<Կոտայքի Ս.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ | 21 | 228 |

### *2.3 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ*

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, ծառայությունների եւ այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:
Կոտայքի Քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքի ղեկավարը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են Քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված են հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ:

### 2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

